ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ. Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 432 էջ (1 գուն. քարտեզ, 255 գուն. և սև/սպիտակ լուսանկարներ).– Հիշողության ազգագրություն. 2:*

Մեզանում քիչ չեն Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ինչպես ընդհանրացնող, այնպես և առանձին դրվագներին անդրադարձող հետազոտությունները: Սակայն ցեղասպանության թեման չի սահմանափակվում միայն դրա իրականացման պատմությանն անդրադարձներ կատարելով: Խիստ այժմեական նշանակություն ունի նաև այն խնդրի դիտարկումը, թե ինչպե՞ս է գործում ցեղասպանության հիշողությունը: Նման հետազոտությունները հատուկենտ են, և ցարդ հրապարակի վրա չկար ընդհանրացնող բնույթի մի աշխատանք, ուր անդրադարձ կլիներ խնդրին թե՛ տեսական, թե՛ որոշակի նյութի մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հ. Մարությանի մենագրությունը, որ ստեղծվել է շուրջ երկու տասնամյակ տևող հետազոտությունների ընթացքում: Աշխատությունը, առանց չափազանցության, առաջինից մինչև վերջին էջը պարունակում է նորութաբեր բազմաթիվ հարցադրումներ և դրանց լուծումների առաջարկներ:

Ներածության մեջ (էջ 16–25) հանգամանորեն ներկայացվում է աշխատանքի աղբյուրագիտական հենքը. բոլորովին նոր տիպի աղբյուրներ են օգտագործվում XX դարի հայոց կոլեկտիվ ու պատմական հիշողության ուսումնասիրության համար: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Հայաստանի անկախության կերտմանը նվիրված Ղարաբաղյան շարժման (1988–1990) ցուցապաստառներին՝ «հասարակական գործընթացների պատկերագիր «վկաներին» (էջ 20), որոնք Շարժման տարիներին ստեղծվում էին հարյուրներով և որոնց շուրջ հազար օրինակ տարիների ընթացքում հավաքել ու դասակարգել է Հ. Մարությանը: Այդ դասակարգումը և առանձնացված խմբերի մանրամասն դիտարկումն էլ հուշել է հեղինակին գրքի թեմայի ընտրությունը: Հենց ցուցապաստառներն են դարձել իրական, գործող «հերոսներ», ինչն արտացոլված է նաև ենթագլուխների վերնագրերում: Ընդհանրապես, պատկերագրության հիմամբ ինքնության խնդիրներին անդրադարձեր համաշխարհային պատմագիտության մեջ հանդիպում են, սակայն դրանք, որպես կանոն, կամ հենված են լինում մամուլում տպագրված նյութերին, պաշտոնական քարոզչության դրսևորումներին և կամ հարցադրումների ընդգրկմամբ բավականին նեղ են ու սահմանափակվում են հոդվածներով կամ աշխատությունների գլուխներով: Իրենց ճնշող մեծամասնությամբ ժողովրդական զանգվածների ստեղծած պատկերագրության վրա հենված ու նման հարուստ նյութի վերլուծությամբ ստեղծված աշխատանքներ, կարելի է ասել, չկան, և հեղինակի աշխատանքը, իրավամբ, կարելի է համարել առաջինը այդ շարքում: Ընդ որում, հեղինակը մշտապես պատկերագրական նյութը դիտարկում է համապատասխան պատմական ենթատեքստում, ինչը նպաստում է եզրահանգումների հիմնավորվածությանը: Խիստ գովելի է նաև, որ Հ. Մարությանի աշխատությունում մեծ քանակությամբ հայաստանյան մամուլի հրապարակումներ են օգտագործված և այդ կերպ նույնպես նոր նյութ է դրվում գիտական շրջանառության մեջ: Ցանկանում ենք առանձնացնել նաև հեղինակի մի միտքը՝ ձևակերպված ներածության առաջին իսկ տողերում, որը, մեր կարծիքով, նրա առանցքային մոտեցումն է (որը լիովին կիսում ենք նաև մենք) մենագրության մեջ դիտարկվող հարցերին. «… ցանկացած էթնիկ կամ ազգային ընդհանրության համար փորձություններով լի անցյալի հիշողությունը ոչ թե բեռ է, որ կարելի է հարկ եղած դեպքում թոթափել, այլ հարստություն, որ պետք է կարողանալ հավուր պատշաճի օգտագործել» (էջ 16):

Ամբողջությամբ նորույթ է նաև աշխատության առաջին գլուխը՝ «Հիշողության դերն ազգային ինքնության համակարգում. տեսական հարցադրումներ» (էջ 27-67): Այն հենված է հիշողության տեսությանը նվիրված արևմտյան հետազոտողների արդի աշխատանքներին, որոնց հեղինակը ծանոթացել է ԱՄՆ-ում գիտական դրամաշնորհներով հետազոտություններ իրականացնելու ժամանակ: Գլխի համապատասխան բաժիններում մանրամասն ներկայացվել են «անցյալ» հասկացությունը, կոլեկտիվ և պատմական հիշողության անհատական ու սոցիալական չափումները, դիտարկվում է կոլեկտիվ հիշողությունը անցյալի և ներկայի փոխհարաբերությունների համատեքստում, տարեդարձային բնույթի նշումներում, հիշատակումներում, անդրադարձ է կատարված կոլեկտիվ հիշողության և պատմության, բանավոր պատմությունների ու տրավմատիկ հիշողության փոխհարաբերության հարցերին: Ընդ որում, հեղինակը ոչ թե պարզապես թարգմանել և ընթերցողին է ներկայացրել հայտնի տեսաբանների դրույթները, այլ նաև համեմել է դրանք հայկական նյութով[1]: Հատկապես մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում գլխի վերջին, հանրագումարային բաժինը՝ «Հիշել, թե՞ մոռանալ «դժվար» անցյալը» (էջ 61–67): Կիսում եմ հեղինակի մոտեցումը, որ այն փաստը, որ հայոց համար ցեղասպանության հիշողությունն է դարձել ինքնության կարևորագույն տարրը, «բնավ չի նշանակում, որ հայերն … առանձնահատուկ … ազգ են և առանձնահատուկ հիշողություն ունեն, որը խանգարում է նրանց ինչպես ամենօրյա կյանքում, նույնպես և աշխարհի հետ շփումներում ու պետք է մոռացության մատնվի հանուն ինչ-ինչ նյութական ակնկալիքների: Հայերը պարզապես նման են աշխարհի շատ ու շատ այլ ազգերի, որոնք ունեն իրենց պատմական ու կոլեկտիվ հիշողությունը, որը կազմում է նրանց ինքնության էական դրսևորումներից մեկը: Պարզապես հայոց ինքնության կարևորագույն բաղադրիչը կազմող հիշողությունը ցավի և կորստի հիշողություն է…: Եվ ինչպես աշխարհի այլ ժողովուրդներ չեն հրաժարվում իրենց ինքնության մաս կազմող «անցյալի բեռից», նույնպես և հայերը չեն կարող հրաժարվել դժվարին անցյալի հիշողության ժառանգությունից: Եվ դա միանգամայն նորմալ, օրինաչափ, միջազգային բազմաթիվ զուգահեռներ ունեցող, բնավ ոչ պախարակելի երևույթ է» (էջ 63–64): Այս բաժնում հեղինակը նաև նոր, կարծում եմ, միանգամայն ընդունելի մոտեցում է առաջարկում ցեղասպանության տարիների ինքնապաշտպանությունների գնահատման, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերում:

Աշխատության երկրորդ գլխում՝ «1915 թ. ցեղասպանությունը հայոց կոլեկտիվ և պատմական հիշողության համատեքստում» (էջ 69–123), Հ. Մարությանն անդրադառնում է մի շարք խնդիրների: Եղեռնի 50-ամյակի առթիվ տեղ գտած իրադարձությունների մասին խոսելիս, հեղինակն անում է մի հետաքրքիր շեշտադրում, նշելով, որ Ծիծեռնակաբերդի «ցեղասպանության զոհերի հուշարձանային համալիրը, այսպես թե այնպես, տեղավորվում է հուշային բնույթի՝ հենց այդ տարիներին [ԽՍՀՄ տարածքում] սկսված կառուցումների շարքում» (էջ 71): Նորությունը մոտեցում է դրսևորված նաև «Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծիսակարգի համատեքստում» բաժնում, որտեղ հայոց իրականությունից բազմաթիվ զուգահեռներ բերելով հիմնավորվում է այն գաղափարը, որ «Ցեղասպանության զոհերի հուշահամալիր ամենամյա քայլերթերում միավորվում են կոլեկտիվ հիշողությունն ու թաղման ծիսակարգը՝ վերածվելով ազգային ինքնության յուրատեսակ դրսևորման» (էջ 78): «Ծաղկեպսակցուցապաստառներ» բաժնում համապատասխան նյութի վերլուծությամբ ցույց է տրված, թե ինչպես են ծաղկեպսակները՝ լինեն դրանք ծաղիկների դաշտի ձևավորման, թե սգո ժապավենների գրությունների միջոցով, ձեռք բերում պլակատի ու տրանսպարանտի գործառույթներ, թե ինչպես է ծաղկեպսակների վրա տեղ գտած տեղեկությունը դառնում երկրի քաղաքական ու սոցիալական կառուցվածքի փոփոխության, ինչպես նաև ինքնության ձևափոխման ակնառու ցուցիչ: Հիմնավորվում է այն միտքը, որ «Եղեռնի զոհերի հուշահամալիրը Հայաստանի միակ տարածքն է, որտեղ տարին մեկ անգամ «ներկա» ստանալու հնարավորություն են ունենում

[1] *Տե՛ս, օրինակ, Վ. Սվազլյան. Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000, նույնի՝ Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, Երևան, 2003 և այլն:*

քաղաքական, տնտեսական, հասարակական տարաբնույթ կազմակերպություններ» (էջ 94): «Մեջբերումներ» բաժնում, նաև գրքի այլ էջերում, հեղինակը հատ-հատ քննում է պատկերագրության մեջ տեղ գտած հայ (Ա. Ահարոնյան, Սիամանթո, Ե. Չարենց, Պ. Սևակ, Հ. Շիրազ), ինչպես նաև օտար (Ա. Ֆրանս, Շ. դը Կոստեր) հեղինակների տարբեր ստեղծագործություններից արված մեջբերումները, վերհանում է դրանց հայտնվելու և ինքնության դրսևորումներ դառնալու խորքային պատճառները: «Քար աշխարհ» բաժնում ցուցապաստառային լեզվով ցույց է տրվում, թե ինչպես է Շարժման զարգացմանը զուգընթաց աստիճանաբար փոխվում մարդկանց քաղաքական գիտակցության մակարդակը: Անդրադարձ կատարելով 1988 թ. փետրվարյան իրադարձություններին՝ հեղինակն այն համոզմունքն է հայտնում, որ «Շարժման սկիզբն ազդարարող փետրվարյան հանրահավաքներում հնչած ելույթներում հավաք ձևով առկա էին կոչեր և մտքեր, լուծումների առաջարկներ, որոնք, հետագայում աստիճանաբար զարգանալով, վերածվեցին Շարժման ողջ ընթացքին ուղեկցող առանձին, ինքնուրույն ուղղությունների» (էջ 119):

Մենագրության երրորդ գլխում՝ «Սումգայիթյան ջարդերի և Մեծ եղեռնի ժողովրդական համադրությունները» (էջ 125–167) նույնպես համակցված են երևույթի պատմագիտական ու ազգաբանական դիտարկումները: Այսպես՝ Սումգայիթի զոհերի հիշատակի հետ կապված սգո երթերը համադրվում են մահվան յոթերորդ, քառասուներորդ և առաջին տարեդարձի նշման ժողովրդական սովորության հետ: Նշվում է, որ Ղարաբաղյան շարժման մեջ սումգայիթյան ջարդերը՝ որպես Մեծ եղեռնի շարունակություն ընկալումն առաջին հերթին տեղ գտավ հենց ցուցապաստառներում, մանրամասն դիտարկվում են այդ երևույթի զարգացումները, բազմազան դրսևորումները: Պատմագիտական հարուստ նյութի հենքով հանգամանորեն վերլուծվում են հայոց կոլեկտիվ և պատմական հիշողության դրսևորումները տարեթվերում ու տեղանուններում՝ արտացոլված «ցեղասպանությունների շարքեր» պայմանական անունը կրող պատկերագրական լուծումներում: Մանրամասն դիտարկվում են հայոց ինքնության բաղադրիչ հանդիսացող մի շարք ձևակերպումներ, այդ թվում՝ «ընդամենը մեկ հայի կենդանի թողնելը» և այլն: Ընթերցողը քայլ առ քայլ հետևում է, թե ինչպես են մարդկանց դիտարկումները ցեղասպանության ու ջարդերի գնահատականներից արտածվելով՝ տարածվում խորհրդային իրականությունը բնութագրող շատ ավելի լայն հասարակական երևույթների, դրանց գնահատականների վրա: Հեղինակը եզրահանգում է, որ Շարժման տարիների պատկերագրության մեջ արտացոլվել է XIX դարավերջի – XX դարասկզբի հայերի ցեղասպանության, կոտորածների ու ջարդերի գրեթե ողջ ներկապնակը, ինչը վկայությունն է այն բանի, որ դրանք XX դարավերջի հայության պատմական ու կոլեկտիվ՝ տրավմատիկ երանգներ ունեցող հիշողության նկատելի մասն են կազմում: Միևնույն ժամանակ, այդ հիշողությունները ստատիկ երևույթներ չեն, այլ ենթակա են ձևափոխումների, որոնք կարող են լինել ինչպես ներքին զարգացումների արդյունք, այնպես էլ արտաքին ազդեցությունների հետևանք:

Աշխատության հաջորդ գլխում (էջ 169–181) դիտարկված են հայոց կոլեկտիվ և պատմական հիշողության դրսևորումները ողբի ու հուզական բանաձևումներում՝ առաջին հերթին արտածված Պ. Սևակի ու Սիամանթոյի մեծ ժողովրդականություն վայելող ստեղծագործություններից:

Հինգերորդ գլուխը՝ «Սումգայիթյան ոճրագործությունների իրականացման, պատասխանատուների բացահայտման, սատարման և պատժի ժողովրդական ընկալումները» (էջ 183–262), մենագրության առանցքային մասերից է: Այստեղ վերլուծված նյութերը, որոնք վերաբերում են «հրապարակայնության» քաղաքականության ընկալումներին ու գնահատականներին, խորհրդային զորամիավորումների նկատմամբ վերաբերմունքի փոփոխություններին, սումգայիթյան ջարդերի դատավարության գնահատականին և այլն, ուղղակիորեն ցուցում են, որ մարդկանց համար հենց ցեղասպանություն ընկալվող սումգայիթյան իրադարձությունների գնահատականն է դառնում խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված կաղապարների փորձաքարը, մի խոչընդոտ, որի վրա սայթաքում են, որը չեն կարողանում հաղթահարել շուրջ 70 տարի քարոզվող խորհրդային կաղապարված հարացույցները (պարադիգմա)՝ ճշմարտության հայելի մամուլը, ժողո-

վուրդների անխախտ բարեկամությունը, ԽՄԿԿ-ն, իր քաղաքացիների բարօրության մասին օրուգիշեր մտածող Կենտրոնը, հայության գոյապահպանության նեցուկ ընկալվող խորհրդային–ռուսական բանակը, ամենաարդար դատական համակարգը և այլն: Ցուցապաստառային տեքստերն ու պատկերներն ուղղակիորեն վկայում են, որ դրանց կերտողները և ի ցույց դնողներն արդեն իսկ թոթափել են խորհրդային առասպելների ծանրությունը: Ուսումնասիրողի առջև վեր է հառնում խորհրդահայ այնպիսի քաղաքացին, ում համար ազատ մտածողության ձևավորման հարցում ուղենշային դեր է ստանձնում հենց պատմական ու կոլեկտիվ հիշողության կարևորագույն՝ ցեղասպանության հիշողության տարրը: Այսինքն՝ ցեղասպանության հիշողության գործոնը դառնում է այն լոկոմոտիվը, որը հնարավորություն է ընձեռում քայլ առ քայլ փոխելու հին պատկերացումներն ու կարծրատիպերը, ձևափոխելու հին արժեքների վրա հենված ինքնությունը և աստիճանաբար ձևավորելու նոր ինքնություն:

Հաջորդ գլխում (էջ 263–284) համապատասխան բաժինների միջոցով, որոնց վերնագրերն արդեն իսկ խոսուն են՝ «Զարթիր, լառ…», «Պատմության դրվագների վերագնահատում», «Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք», վերլուծվում է հայոց ինքնության մեջ անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացը: Այդ շատ լավ է երևում հենց տարբեցտարի փոխվող ցուցապաստառային տեքստերի բնույթից՝ խնդրողական երանգներ ունեցող, արդարություն, ցեղասպանության ճանաչում, արդարացի դատ պահանջող տեքստերն իրենց տեղը զիջում են վերջնական եզրակացության բնույթ ունեցող՝ պայքարի ու զենքի դիմելու անհրաժեշտությունը մատնացույց անող, անկախության վերականգնման կոչող, հայկական կոտորածների պատճառների և պատասխանատուների մասին պատկերացումների փոփոխություն արձանագրող տեքստերին, որոնց պակը կարելի է համարել «Սուգը հավերժ է, երբ պայքար չկա» բանաձևը:

Վերջին գլխում (էջ 285–304), որտեղ բաժինների «ցուցապաստառային» բնութագրական վերնագրերն արդեն իսկ հուշում են դրանց բովանդակությունը՝ «Տեր-Զոր… Սումգայիթ… Ատոմակայան… Նախիջևան», «Հայ երեխային – հայկական դպրոց», «Պատմական հուշարձանների ավերումը հոգևոր եղեռն է», դիտարկվում են Ղարաբաղյան շարժման ու դրան հաջորդող տարիներին «ցեղասպանություն» հասկացության սահմանների ընդլայնումը, ինչպես նաև ցեղասպանությունների կանխման միջոցների մասին ժողովրդական պատկերացումները: Գլուխն ավարտվում է հայ ժողովրդի փրկության ուղին մատնանշող չարենցյան պատգամի համակողմանի դիտարկմամբ:

Վերջաբանում (էջ 305–310) ի մի են բերված աշխատության հիմնական դրույթները: Շեշտվում է այն միտքը, որ Ղարաբաղյան շարժման պարագայում ցեղասպանության հիշողությունն է դառնում այն միջոցը, որը թույլ է տալիս իրականացնել ժողովրդավարական վերափոխումներ: Այսինքն՝ այն գործոնը, որը հաճախ մեկնաբանվում է իբրև «անցյալի կապանքներից» ազատվելուն ու այդպիսով հայության իրական առաջընթացը խոչընդոտող, «հետադիմական» միջոց, հայաստանյան իրականության մեջ դարձավ առաջադիմության ամենակարևոր խթանիչը, անկախության կերտման գործիք: Եզրակացվում է, որ հայոց ցեղասպանության հիշողությունն այսօր էլ ունի արարող և կենսատու հզոր ներուժ, պարզապես պետք է հավուր պատշաճի օգտագործել այն:

Մենագրությունն օժտված է հարուստ, վեց տասնյակ էջերի վրա շարադրված ծանոթագրություններով: Կա լուսանկարների մանրամասն ցանկ, Ղարաբաղյան շարժման իրադարձությունների համառոտ ժամանակագրություն, գրականության, ինչպես նաև բարեխղճորեն մշակված թեմատիկ-առարկայական ցանկ:

Մեծապես կարևորվում է այն հանգամանքը, որ աշխատությունը լույս է տեսել նաև անգլերեն՝ այդպիսով մատչելի դառնալով օտարալեզու հանրությանը[2]*:*

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

---

[2] H a r u t y u n M a r u t y a n. Iconography of Armenian Identity. Volume 1: The Memory of Genocide and the Karabagh Movement. – Yerevan: “Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences, Republic of Armenia. 2009, XVI, 416 p., ill. (1 color map, 255 color and monochrome photos). – Anthropology of Memory. 2.